

## ՎՃՌԱՔԵԿ ԲՈՂՈՔԸ՝ ՈՐՊԵՍ ՎՃՌԱՔԵԿ

### ՎԱՐՈՒՅՑԻ ՀԻՄՔ՝

#### Տաթև Սուլջան

*ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու*

Իրավաբանական գրականության մեջ տեղ գտած ընդհանուր բնորոշումների համաձայն՝ վճռաքեկ բողոքը քրեական դատավարության մասնակցի՝ դատարանին ուղղված՝ դատավարական ձևակերպում ստացած խնդրանքն է՝ իր իրավունքներն ու օրինական շահերը ոտնահարող դատական ակտը վերանայելու և գործն ըստ էության լուծելու մասին<sup>2</sup>։ Բավական ընդգրկում մեկ այլ բնորոշման համաձայն՝ վճռաքեկ բողոքը վճռաքեկ ատյանի դատարանում վարույթի հարուցման առիթ ծառայող գրավոր դատավարական փաստաթուղթ է, որն ամրագրում է վճռաքեկ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների գործողություններն օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի բողոքարկման կապակցությամբ, կազմվում է քրեադատավարական օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ և պարունակում է վճռաքեկ ատյանին հասցեագրված և պատճառաբանված պահանջ համապատասխան դատական ակտն օրինականության, հիմնավորվածության և արդարացիության տեսանկյունից ստուգելու մասին՝ իր խախտված իրավունքների և օրինական շահերի վերականգնման նպատակով<sup>3</sup>։ Որոշ դատավարագետներ, ելնելով վճռաքեկ բողոքի նշանակությունից, այն բնորոշում են որպես բողոքը վարույթ ընդունելու և քննության առնելու բացարձակ նախապայման<sup>4</sup>, կամ որպես առիթ, որը համապատասխան հիմքերի առկայության պարագայում դառնում է նախադրյալ այս կամ այն հիմքով դատական ակտի բեկանման կամ փոփոխման համար<sup>5</sup>։ Ռուսական քրեադատավարական տեսության մեջ առկա «վճռաքեկ բողոք» հասկացության և դրա նշանակության վերաբերյալ առավելապես ընդհանուր բնույթի այս տեսական բնորոշումներն առանձին դեպքերում արտացոլում են սոսկ ռուսական վճռաքեկության (մինչև 2013 թվականի հունվարի 1-ը գործող) առանձնահատկությունները, որոնցով այն սկզբունքորեն տարբերվում է մեր ներպետական օրենսդրությամբ նախատեսված վճռաքեկության մոդելից։ Խոսքը, մասնավորապես, վերաբերում է գործի փաստական կողմը վերանայելու իրավասությանը, բողոքը վարույթ ընդունելու և դատական ակտը վերանայելու հայեցողական լիազորությունների բացակայությանը։ Վերոհիշյալ առանձնահատկություններով է թերևս պայմանավորված, որ վճռաքեկ բողոքը բնորոշվում է որպես վճռաքեկ ատյանի դատա-

<sup>1</sup> Հոդվածը մշակվել է 15-Տ-5Է236 «Ղատական ակտերի վճռաքեկ վերանայման տեսական և գործնական հիմնախնդիրները» գիտական թեմայի շրջանակներում։

<sup>2</sup> Տե՛ս *Калмыков В.Б.*, Кассационное производство в уголовном процессе: Проблемы теории и правоприменения. дисс.... канд. юрид. наук. Казань, 2010, էջ 101, *Гродзинский М.М.*, Кассационное и надзорное производство в советском уголовном процессе, гос. изд. юрид. лит., М., 1949, էջ 34։

<sup>3</sup> Տե՛ս *Сухова О.А.*, Кассационное обжалование судебных решений в Российском уголовном процессе, дисс. ...канд. юрид. наук, Саранск, 2004, էջ 199։

<sup>4</sup> Տե՛ս *Божьев В.*, Пределы прав суда кассационной инстанции // Законность, 2003, N11, էջեր 2-3։

<sup>5</sup> Տե՛ս *Куцова Э.Ф.*, Кассационное обжалование судебных решений в Российском уголовном процессе, дисс. ...канд. юрид. наук, Саранск, 2004, էջեր 30, 77։

րանին ուղղված՝ գործն ըստ էության<sup>1</sup> լուծելու պահանջ կամ դատական ակտի վճռաբեկ վերանայման բացարձակ նախապայման կամ առիթ: Ընդ որում, առաջ անցնելով նշենք, որ, մեր կարծիքով, վճռաբեկ վարույթի հարուցման առիթը ոչ թե վճռաբեկ բողոքն է, այլ վճռաբեկ բողոքարկումը՝ վճռաբեկ բողոք բերելու դատավարական գործողության իմաստով: Վճռաբեկ վարույթ չի կարող հարուցվել, քանի դեռ քրեական դատավարության համապատասխան մասնակցի կողմից չի իրացվել բողոք բերելու իրավունքը: Դեռ ավելին, համապատասխան դատավարական փաստաթուղթը վճռաբեկ բողոքի կարգավիճակ ձեռք է բերում վճռաբեկ դատարանն աներկայացվելու փաստի ուժով: Իսկ վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարանում վարույթի հիմքն է, քանի որ վճռաբեկ դատարանում վարույթի շրջանակներում ընթացող բոլոր դատավարական հարաբերությունները ծավալվում են վճռաբեկ բողոքի շուրջ: Բացի այդ, վճռաբեկ բողոքն է իր բովանդակությամբ փաստում, թե արդյոք պահպանվել են վճռաբեկ բողոքարկման իրավունքի իրացման՝ օրենքով սահմանված պահանջները (վճռաբեկ բողոքարկման նախադրյալները), մասնավորապես՝ արդյոք բողոքը բերել է բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտը, պահպանվել են արդյոք բողոքարկման ժամկետները, արդյոք բողոքարկվել է բողոքարկման ենթակա դատական ակտ, առկա են արդյոք դատական ակտի բողոքարկման և բողոքը վարույթ ընդունելու հիմքեր և այլն: Իսկ նման պահանջների առկայությունը ստուգելու համար հիմք են ծառայում քրեադատավարական օրենքով բողոքի ձևին և բովանդակությանն օրենքով ներկայացվող ընդհանուր պահանջները, որոնք հանգում են հետևյալին. վճռաբեկ բողոքը պետք է բովանդակի՝

1) այն դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը:

2) Տվյալներ բողոք բերած անձի մասին:

3) Դատավճիռը կամ այլ որոշումը, որը բողոքարկվում է, և այդ որոշումը կայացրած դատարանի անվանումը. վճռաբեկ բողոքի բովանդակությանը նման պահանջ ներկայացնելը պայմանավորված է նրանով, որ վճռաբեկ բողոքը, ի թիվս այլոց, առանց քննության է թողնվում այն դեպքում, երբ բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման վճռաբեկության կարգով:

4) Նշում այն մասին, թե դատավճիռը կամ այլ որոշումը բողոքարկվում է ամբողջությամբ, թե՞ մի մասով. վճռաբեկ բողոքի այս կառուցվածքային տարրը կոչված է կանխորոշելու վճռաբեկ վերանայման առարկան և սահմանները: Բացի այդ, դա հնարավորություն է տալիս ստուգել, թե արդյոք պահպանված են բողոքարկման սահմանափակ իրավունք ունեցող սուբյեկտների կողմից բողոք բերելու պայմանները:

5) Պատճառաբանված մատնանշում այն մասին, թե որ նյութական կամ դատավարական իրավունքն է խախտվել, որը ազդել է կամ կարող էր ազդել գործի ելքի վրա, կամ ինչ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներ են առկա. բողոքին ներկայացվող այս պահանջը կոչված է ապահովելու բողոքի հիմնավորվածությունը (պատճառաբանվածությունը): Այն համակարգային կապի մեջ է գտնվում վճռաբեկության սահմանների օրենսդրական կարգավորման հետ: Բողոքի պատճառաբանվածության պահանջը ենթադրում է, որ բողոքաբերը պետք է ներկայացնի որոշակի իրավական կամ փաստական բնույթի դատողություններ, որոնք հիմք կտան կասկածի տակ դնելու դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը: Քանի որ վճռաբեկ դատարանը կաշկանդված է բողոքի հիմքերով և հիմնավորումներով, կարևոր է այս հասկացությունների բովանդակության բացահայտումը: Այսպես, բողոքի հիմքը՝ ստորադաս դատարանի կողմից որոշակի նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի պահանջները խախտված լինելու կամ

<sup>1</sup>Խոսքը չի վերաբերում գործի լրիվ ծավալով ըստ էության կրկին քննությանը, քանի որ ՌԴ քրեադատավարական օրենսդրությամբ ևս վճռաբեկ ատյանը կաշկանդված է վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակով:

նոր երևան եկած կամ նոր հանգամանքների<sup>1</sup> առկայության մասին հիմնական թեզիսն է, որը պետք է հիմնավորվի բողոքի հետագա տեքստում: Ինչ վերաբերում է բողոքի հիմնավորումներին, ապա դրանք անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացնելու մասին որոշակի դատողություններ են, որոնք, որպես կանոն, շարադրվում են գործի հանգամանքների և փաստերի, դրանք հաստատող ապացույցների վկայակոչման, լուծման ենթակա այս կամ այն հարցով դատարանի եզրահանգումների քննադատական վերլուծության, գործի քննության դատավարական կարգի քննադատական գնահատականի, իրավական նորմերի սեփական վերլուծության միջոցով և այլն<sup>2</sup>: Փաստորեն, բողոքի հիմքի առկայությունը հիմնավորելիս բողոք բերած անձը ներկայացնում է փաստեր և փաստարկներ (տրամաբանական, իրավական և այլն), որոնք վկայում են դատական ակտի օրինական, հիմնավորված և արդարացի չլինելու մասին: Եթե փաստերը բխում են բուն գործի նյութերից, ապա փաստարկները բողոքաբերի որոշակի վերլուծական գործունեության արդյունքն են: Վերոշարադրյալը հիմք է տալիս եզրահանգելու, որ վճռաբեկության սահմանների օրենսդրական կարգավորման տառացի մեկնաբանությունից բխում է, որ վճռաբեկ դատարանը կաշկանդված է ոչ միայն բողոքի հիմքերով, դրանք հաստատող փաստերով, այլ նաև բողոքաբերի ներկայացրած փաստարկներով: Եթե վճռաբեկ դատարանին բողոքի հիմքերով և դրանք հաստատող գործի նյութերից բխող փաստերով կաշկանդելը միանգամայն իրավաչափ է հանրային և մասնավոր շահերի ողջամիտ հավասարակշռության երաշխավորման համատեքստում, ապա, կարծում ենք, նույն պնդումը չի կարելի անել փաստարկների առումով, քանի որ դրանք սոսկ բողոքաբերի սեփական մտավոր, տրամաբանական վերլուծության արդյունք են: Եթե վճռաբեկ դատարանը կաշկանդված լինի բողոքաբերի փաստարկներով, ապա ստացվում է, որ բոլոր այն դեպքերում, երբ որոշում է կայացվում, օրինակ, վճռաբեկ բողոքը բավարարելու մասին, վճռաբեկ դատարանը չպետք է հնարավորություն ունենա սեփական, թեկուզև բողոքաբերի հետ համընկնող դիրքորոշումը հիմնավորել լրացուցիչ փաստարկներով: Որոշակի պրակտիկ նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վճռաբեկ դատարանը, իր որոշումներում (խոսքը վերաբերում է վարույթ ընդունված բողոքների վճռաբեկ վերանայման արդյունքում կայացված որոշումներին) դուրս չգալով բողոքի հիմքերի և դրանք հիմնավորող փաստերի շրջանակից, չի սահմանափակվում սոսկ այդ հիմքերի առկայությունը հիմնավորող փաստերի՝ բողոքաբերի վերլուծություններով և դրանց արդյունքներով<sup>3</sup>: Վերոշարադրյալի առնչությամբ հարկ ենք համարում անդրադառնալ Նախագծի 361-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում տեղ գտած կարգավորմանը, համաձայն որի՝ դատական վերանայման բողոքը պետք է բովանդակի **բողոքի հիմքը, այն հաստատող փաստերը**, պահանջը, ինչպես նաև դրանք **հիմնավորող փաստարկները**: Իսկ նույն Նախագծի 390-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկությունն իրականացվում է վճռաբեկ բողոքում նշված **հիմքի և այն հաստատող փաստերի սահմաններում**: Այսպիսով, Նախագիծը բողոքի «հիմնավորում-

<sup>1</sup>Նախագծի 360-րդ հոդվածը դատական սխալի հետ մեկտեղ իբրև դատական վերանայման բողոքի հիմք՝ նախատեսում է դատական ակտը ոչ իրավաչափ դարձնող փաստական կամ իրավական հանգամանքները՝ դատական ակտ կայացնելիս դատարանին և կողմերին անհայտ մնացած կամ դատական ակտը հրապարակելուց հետո առաջացած որևէ փաստ կամ ուժի մեջ մտած որևէ իրավական ակտ կամ արտահայտված որևէ իրավական դիրքորոշում (Նախագծի 365-րդ հոդվածի 5-րդ մաս): Վերոհիշյալ բնորոշումից բխում է, որ դրանք բովանդակային առումով գրեթե նույնական են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներին:

<sup>2</sup>Տե՛ս *Сухова О.А.*, նշված աշխատությունը, էջ 206:

<sup>3</sup> Տե՛ս, ի թիվս այլոց, Վճռաբեկ դատարանի 2015 թվականի փետրվարի 27-ի ԱԿԴ/0002/01/14, 2014 թվականի հոկտեմբերի 31-ի ԵԴԴ/0119/01/13, 2014 թվականի մայիսի 31-ի ՏԴ/0071/01/13, 2014 թվականի մայիսի 31-ի ԿԴ/0029/01/13 որոշումները:

ներ» հասկացության փոխարեն նշում է բողոքի հիմքը հաստատող փաստերի և դրանք հիմնավորող փաստարկների մասին, որոնց տարանջատումը, ինչպես արդեն նշվել է, ինքնանպատակ չէ: Ընդ որում, թեև և՛ «Ղ գործող քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ նաև՝ Օրենսգիրք), և՛ «Ղ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը (այսուհետ նաև՝ Նախագիծ) սահմանում են դատական վարույթի ընթացքում բողոքը լրացնելու օրենսդրական արգելք, Նախագծով այն վերաբերում է միայն բողոքի հիմքերին և դրանք հաստատող փաստերին, և բողոքաբերն արդարացիորեն զրկված չէ նոր փաստարկներ ներկայացնելու հնարավորությունից: Նոր փաստարկներ ներկայացնելու պարագայում բողոքի հիմքը և դրանք հաստատող փաստերը չեն փոփոխվում, այլ բողոքաբերն իր դիրքորոշումը հաստատելու, այն ուժեղացնելու ևս մեկ հնարավորություն է ստանում: Անձին իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նման լրացուցիչ գործիքի ընձեռումը պայմանավորված է Նախագծով վճռաբեկ բողոքի քննության դատավարական կարգի մեջ մրցակցության տարրերի էական ընդլայնմամբ:

6) Բողոք բերած անձի պահանջը. նման պահանջի նախատեսումը պայմանավորված է դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության սկզբունքի ապահովման անհրաժեշտությամբ: Բացի այդ, վարույթը եզրափակող դատավարական որոշման մեջ դատարանը պետք է որոշակի իրավական գնահատական տա բողոքի պահանջին՝ լրիվ կամ մասնակի բավարարի այն կամ թողնի առանց բավարարման:

6.1) Վճռաբեկ բողոք վարույթ ընդունելու հիմքերից որևէ մեկի հիմնավորումները. օրենսդիրը վճռաբեկ բողոքի հիմնավորվածության լրացուցիչ բովանդակային պահանջներ է ներկայացնում, որոնք կոչված են ապահովելու երկրի բարձրագույն դատական ատյան ներկայացվող բողոքների հիմնավորվածության բարձր մակարդակը: Ընդ որում, «Ղ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-48-Ն օրենքով օրենսդիրը ոչ միայն հստակեցրեց օրենքի միատեսակ կիրառության ապահովման հիմքով բողոքը վարույթ ընդունելու պայմանները, այլև որոշակիորեն ուրվագծեց դրանց հիմնավորումների շրջանակը: Բովանդակային պահանջների հետ միասին օրենսդիրը միաժամանակ նախատեսում է բողոքին այն դատական ակտերը կցելու ձևական պահանջ, որոնց հակասում է բողոքարկվող դատական ակտը: Բողոքի հիմնավորվածության ապահովման տեսանկյունից, կարծում ենք, բավարար են այդ դատական ակտերի ռեկվիզիտների վկայակոչումը, համապատասխան հատվածների մեջբերումը և համեմատական վերլուծություն կատարելը: Դատական ակտեր կցելու պահանջի ոչ նպատակահարմար լինելու մասին եզրահանգումը պայմանավորված է դրա հետևանքով պրակտիկայում առաջացող խնդիրներով: Այն շատ հաճախ հանգեցնում է ժամանակային, նյութական ռեսուրսների ավելորդ կորստի, բողոքի քննության ձգձգումների: Այսպես, վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին առանձին որոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բողոքը վերադարձնելու հիմքը շատ հաճախ հենց քննարկվող դատական ակտերը կցելու պահանջը չապահպանելն է: Ընդ որում, քիչ են այն դեպքերը, երբ բողոքը վերադարձվում է դրանում վկայակոչված մոտ մեկ տասնյակ կամ նույնիսկ ավելի որոշումներից մեկը կամ մի քանիսը չկցելու հիմքով<sup>1</sup>: Կարծում ենք՝ այս դեպքում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը կայացնելը, այն բողոքաբերին բողոքի հետ միասին ուղարկելն ավելորդ ծանրաբեռնում են վճռաբեկ դատարանում վարույթը: Թերևս կասկածից վեր է, որ բողոքին չկցված՝ պահանջվող դատական ակտերն անհրաժեշտության դեպքում գտնվելն առկա էլեկտրոնային և թղթային հարուստ աղբյուրների առ-

<sup>1</sup>Տե՛ս, ի թիվս այլոց, Վճռաբեկ դատարանի 2016 թվականի մարտի 12-ի ԵԿԴ/0123/01/14, 2015 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԱԲԴ/0142/01/14 որոշումները:

կայության պարագայում առանձնապես մեծ դժվարություն չի ներկայացնում, առավել ևս եթե խոսքը վերաբերում է ՀՀ Վճռաբեկ դատարանի (այսուհետ նաև՝ Վճռաբեկ դատարան) որոշումներին: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համանման կարգավորման սահմանադրականության հարցի քննարկման շրջանակներում Սահմանադրական դատարանն իր 2016 թվականի հուլիսի 12-ի ՍԴՈ-1296 որոշման մեջ, իրավաչափ համարելով Վճռաբեկ բողոք բերողի կողմից վկայակոչվող իրավական դիրքորոշումների և համապատասխան դատական ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումների համեմատական վերլուծության պահանջը, այդուհանդերձ գտել է, որ համապատասխան դատական ակտերը բողոքին կցելու պահանջը ոչ իրավաչափ կերպով ծանրաբեռնում է բողոքաբերին այն պարագայում, երբ դրանք հասանելի են դատավարության կողմերին և Վճռաբեկ դատարանին: Հատուկ անդրադարձնալով Եվրոպական դատարանի վճիռները կցելու՝ օրենքի պահանջին, երբ մի կողմից՝ դրանք մի քանի տասնյակ էջեր են կազմում ու համաձայն իրավակիրառ պրակտիկայի՝ պետք է թարգմանաբար ներկայացվեն (նկատի ունենալով, որ ՀՀ-ում դատավարությունը տարվում է հայերենով), մյուս կողմից՝ սահմանափակ է բողոք ներկայացնելու ժամկետը, Սահմանադրական դատարանը գտել է, որ այն կարող է վտանգել արդար դատաքննության իրավունքի իրացումը: Ուստի վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք Օրենսգրքի 407-րդ հոդվածի 2.2-րդ մասի 1-ին, 2-4-րդ կետերից, ինչպես նաև Նախագծի 386-րդ հոդվածի 2-րդ մասի 2-4-րդ կետերից հանել համապատասխան դատական ակտերը կցելու պահանջը:

7) Բողոքին կցվող նյութերի ցանկը. վերոշարադրյալ պահանջի հետ կապված՝ հարկ է նշել, որ իբրև Վճռաբեկ բողոքին ներկայացվող ձևական պահանջ՝ օրենսդիրը բողոքաբերին պարտավորեցնում է բողոքին կցել:

ա) «բողոքի պատճենը, գործը քննած դատարան և դատավարության մասնակիցներին (բացառությամբ քննիչի և հետաքննության մարմնի) ուղարկված լինելը հավաստող փաստաթղթերը»: Վերոհիշյալ նորմի օրենսդրական ձևակերպումը, մասնավորապես պատճենը բառից հետո օգտագործվող «» կետադրական նշանը պրակտիկայում տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տալիս: Կարծում ենք՝ տրամաբանական է այն մեկնաբանությունը, որ օրենսդիրը նախատեսել է բողոքի պատճենը գործը քննած դատարան և դատավարության մասնակիցներին ուղարկելու և այն ուղարկված լինելու փաստը հավաստող անդորրագրերը բողոքին կցելու պահանջ: Սակայն հարց է ծագում, թե արդյոք բողոքին պետք է կցվի նաև բողոքի պատճենը: Եթե օրենսդիրը նախատեսած լիներ թե՛ բողոքի պատճենը և թե՛ այն դատարան և դատավարության մասնակիցներին ուղարկված լինելը հավաստող փաստաթղթերը կցելու պահանջ, ապա քննարկվող նորմի ձևակերպման մեջ օրենսդիրը ստորակետից հետո պետք է օգտագործեր «այն» դերանունը: Մինչդեռ առկա օրենսդրական ձևակերպման պայմաններում, եթե ստորակետը մեկնաբանվի այնպես, որ բողոքին պետք է կցված լինի բողոքի պատճենը, ապա հարց է ծագում, թե դատավարական ինչ փաստաթուղթ (փաստաթղթեր) ուղարկված լինելը հավաստող անդորրագրեր պետք է կցվեն բողոքին: Հաշվի առնելով, որ բողոքի պատճենը կցելու օրենսդրական անհրաժեշտությունը պարզ չէ, մինչդեռ բողոքի պատճենը դատարան և դատավարության մասնակիցներին ուղարկելու պահանջը միանգամայն տրամաբանական է, քանի որ բողոքի պատճենը ստանալուց հետո դատական ակտը կայացրած դատարանը գործն ուղարկում է Վճռաբեկ դատարան, իսկ դատավարության մասնակիցը կարող է իրացնել բողոքի պատասխան ներկայացնելու իրավունքը, ապա, կարծում ենք, ստորակետի օգտագործումը սոսկ լեզվական թերություն է: Ընդ որում, գործնականում այս նորմի վերոհիշյալ մեկնաբանության է առաջնորդվում Վճռաբեկ դատարանը: Նման եզրահանգման համար հիմք է ծառայում այն, որ քննարկվող պահանջը պահպանված չլինելու հիմքով բողոքը վերադարձնելու ինստիտուտի ներմուծումից հետո Վճռաբեկ դատարան ներկայացված

բողոքների ճնշող մեծամասնությանը դրանց պատճենները կցված չեն եղել, սակայն բողոքը նշված հիմքով վերադարձնելու որևէ որոշում չկա:

բ) Օրենսգրքի 407-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ներկայացուցչի՝ օրենսգրքով սահմանված կարգով ձևակերպված լիազորագիրը և վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը):

8) Բողոք ներկայացնող անձի ստորագրությունը:

«Վճռաբեկ բողոք» և «վճռաբեկ բողոքարկում» հասկացությունների սերտ կապով պայմանավորված՝ կարծում ենք՝ կարիք կա անդրադառնալու «վճռաբեկ բողոքարկում» հասկացությանը: Այսպես, քրեադատավարական տեսության մեջ առկա բնորոշումների վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգելու, որ այն ընկալվում է հետևյալ երեք առումներով՝ վճռաբեկ բողոք բերելու սուբյեկտիվ իրավունք, դատավարական գործունեության տեսակ և իրավական ինստիտուտ, որը կարգավորում է վճռաբեկ բողոքարկման դատավարական գործունեությունը (վճռաբեկ բողոքարկման իրավունքն օբյեկտիվ իմաստով): Վճռաբեկ բողոքարկումը՝ որպես վճռաբեկ բողոք բերելու սուբյեկտիվ իրավունք և որպես դատավարական գործունեության տեսակ, հասկացվում է նեղ և լայն իմաստներով: Նեղ իմաստով վճռաբեկ բողոքարկման իրավունքը սոսկ վճռաբեկ բողոք բերելու իրավունքն է<sup>1</sup>, իսկ վճռաբեկ բողոքարկումը՝ քրեական դատավարության իրավասու մասնակիցների՝ վճռաբեկ բողոք բերելու (վճռաբեկ ատյանի դատարանին դիմելու)՝ քրեադատավարական օրենքով կարգավորված գործունեությունը<sup>2</sup>: Վճռաբեկ բողոքարկման իրավունքը լայն իմաստով ներառում է նաև վճռաբեկ ատյանի դատարանի կողմից՝ օրենքով սահմանված կարգով դրա քննության իրավունքը<sup>3</sup>, իսկ վճռաբեկ բողոքարկումն էլ նույն տրամաբանությամբ՝ բողոքն ըստ էության քննության առնելու, լուծելու և դրա արդյունքները դիմումատուին հասցնելու հետ կապված դատավարական գործունեությունը<sup>4</sup>: Սակայն մենք ինքներս հակված ենք վճռաբեկ բողոքարկման՝ վճռաբեկ բողոք բերելու սուբյեկտիվ իրավունքի և վճռաբեկ բողոք բերելու դատավարական գործողության՝ նեղ իմաստով ընկալմանը: Այլ հարց է, որ վճռաբեկ բողոք բերելու սուբյեկտիվ իրավունքին համապատասխանում է այն քննության առնելու վճռաբեկ ատյանի դատարանի պարտականությունը, իսկ բողոքը բերելու դատավարական գործողությունն առիթ է դրա նախնական քննության և քննության արդյունքները բողոքաբերին հասցնելու (բողոքի նախնական քննության արդյունքով կայացված որոշումը բողոքաբերին ուղարկելու) համար: Եվ վերջապես. վճռաբեկ բողոքարկումը՝ որպես քրեադատավարական ինստիտուտ, քրեադատավարական նորմերի համակցություն է, որը սահմանում է վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, բողոքարկման ժամկետներն ու բողոքարկման ենթակա դատական ակտերի շրջանակը, վճռաբեկ բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները և դրանք չպահպանելու հետևանքները, վճռաբեկ բողոքարկման դատավարական կարգը<sup>5</sup>:

Վճռաբեկ բողոքարկումը՝ բողոք բերելու սուբյեկտիվ իրավունքի իմաստով, քրեական դատավարության մասնակիցների տնօրինչական իրավունքն է<sup>6</sup>, որի

<sup>1</sup> Տե՛ս *Калмыков В.Б.*, նշված աշխատությունը, էջ 103:

<sup>2</sup> Տե՛ս *Сухова О.А.*, նշված աշխատությունը, էջ 76:

<sup>3</sup> Տե՛ս *Беззубов С.И.*, Производство по уголовному делу в апелляционном суде: проблемы теории, нормативного регулирования и правоприменительной практики, дисс... канд. юрид. наук. -Н. Новгород: НА МВД РФ, 2007, էջ 53:

<sup>4</sup> Տե՛ս *Беззубов С.И.*, նշված աշխատությունը, էջ 111, *Белобородов С.В.*, Принцип широкой свободы обжалования в уголовном судопроизводстве России, дисс. ...канд. юрид. наук. - Нижний Новгород: НА МВД РФ, 2006, էջեր 43-48:

<sup>5</sup> Տե՛ս *Сухова О.А.*, նշված աշխատությունը, էջ 76:

<sup>6</sup> Տե՛ս *Белобородов С.В.*, նշված աշխատությունը, նույն տեղում, *Калмыков В.Б.*, նշված աշխատությունը, էջ 47:

առնչությամբ քրեադատավարական տեսության մեջ առանձնացնում են վճռաբեկ բողոքարկման ազատությունը՝ որպես վճռաբեկ վարություն մրցակցության սկզբունքի դրսևորում: Այս վերջին դիտարկումը, սակայն, փոքր-ինչ հակասական կարող է թվալ՝ հաշվի առնելով, որ տեսության մեջ վճռաբեկ բողոքարկման ազատությունն առհասարակ ներկայացվում է որպես խորհրդային ռեկզայի բնութագրական առանձնահատկություն, անգամ սկզբունք, իսկ խորհրդային դատավարությանն ընդհանրապես խորթ էր մրցակցության գաղափարախոսությունը: Ընդ որում, խորհրդային դատավարագիտությունը վճռաբեկ բողոքարկման ազատությունը կապում էր դատական ակտի հետ անհամաձայնությունն առանց որևէ փաստարկման արտահայտելու հնարավորության հետ, և դրա երաշխիքը օրենքով վճռաբեկ բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող հստակ պահանջների բացակայությունն էր<sup>1</sup>: Վճռաբեկ բողոքարկման ազատության սկզբունքի դերն ու նշանակությունն ընդգծում են նաև ժամանակակից դատավարագետները<sup>2</sup>: Քրեադատավարական տեսության մեջ վճռաբեկ բողոքարկման ազատության դրսևորում են համարվում բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների լայն շրջանակի նախատեսումը, ամբաստանյալի վիճակի վատթարացման բացառման երաշխիքով վճռաբեկ բողոք ներկայացնելու եղանակով վճռաբեկ վերանայման ընթացակարգ հարուցելու, բողոքի հիմնավորվածության և պատճառաբանվածության սահմանները որոշելու, բողոքը հետ վերցնելու դատավարական լիազորությունների առկայությունը<sup>3</sup> և այլն: Ժամանակակից դատավարագետները, սակայն, միակարծիք չեն վճռաբեկ բողոքարկման ազատության այնպիսի հատկանիշի մեկնաբանման հարցում, ինչպիսին վճռաբեկ բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող հստակ պահանջների բացակայությունն է<sup>4</sup>: Ընդ որում, այն դատավարագետները, որոնց կարծիքով վճռաբեկ բողոքին ներկայացվող հստակ պահանջների նախատեսումը որևէ կերպ չի սահմանափակում վճռաբեկ բողոքարկման ազատությունը, պարզապես գտնում են, որ վճռաբեկ բողոքարկման ազատությունը, ի տարբերություն վճռաբեկ բողոքարկման իրավունքի, որն անձի դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ մասն է, և որը սահմանափակման ենթակա չէ, վճռաբեկ բողոքարկման ազատությունը բացարձակ բնույթ չի կրում: Վճռաբեկ բողոքարկման ազատության իրացման օրենքով հստակ սահմանված որոշակի շրջանակների նախատեսումը նույն դատավարագետները դիտարկում են որպես դատավարության տարբեր կողմերի շահերի և ընդհանրապես հանրային ու մասնավոր շահերի հավասարակշռման միջոց<sup>5</sup>: Վերոհիշյալ դիրքորոշումը, սակայն, զուտ տեսական առումով որոշակի առարկությունների տեղիք է տալիս: Կարծում ենք՝ օրենքով նախատեսված վճռաբեկ բողոքարկման առարկան, հիմքերը ու ժամկետները, վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը և վճռաբեկ բողոք բերելու դատավարական կարգը ոչ թե վճռաբեկ բողոքարկման ազատության սահմանափակումներ են, այլ բողոքարկման իրավունքի իրացման պայմաններ: Վճռա-

<sup>1</sup>Տե՛ս *Гродзинский М.М.*, նշված աշխատությունը, էջ 20:

<sup>2</sup>Учебник уголовно-процессуального права/Под ред. П.А. Лупинской. - М., 2003, էջեր 591-592, *Никитина Л.В.*, Действие принципов уголовного процесса в апелляционном, кассационном и надзорном производствах// Вестник Саратовской гос. акад. права, 2000, N2, էջ 53, *Белобородов С.В.*, նշված աշխատությունը, էջ 93:

<sup>3</sup>Տե՛ս *Калмыков В.Б.*, նշված աշխատությունը, էջ 67, *Сухова О.А.*, նշված աշխատությունը, էջ 67

<sup>4</sup>Տե՛ս *Гвоздева С.В.*, Особенности апелляционного производства по новому УПК РФ//Новый Уголовно-процессуальный кодекс Российской Федерации: проблемы законодательства, теории и практики: Сб. науч. тр.//Отв. ред. П.Л.Пудников, Волгоград, 2002, էջ 175, *Волколуп О.В.*, Система уголовного судопроизводства и проблемы ее совершенствования. СПб., էջեր 193-194, *Сухова О.А.*, նշված աշխատությունը, էջ 71:

<sup>5</sup>Տե՛ս *Сухова О.А.*, նշված աշխատությունը, էջեր 72-73:

բեկ բողոքարկման իրավունքի բացարձակ բնույթի մասին դիտարկումը կարող է ընդունելի համարվել այն պարագայում, եթե վճռաբեկ բողոքարկման իրավունքը նույնացվում է սոսկ ձևական առումով վճռաբեկ բողոք բերելու (վճռաբեկ դատարան դիմելու) հնարավորության հետ: Վճռաբեկ բողոքարկումը, սակայն, ինքնանպատակ չէ: Անձը վճռաբեկ բողոք է բերում իր նկատմամբ կայացված դատական ակտի վերանայման սահմանադրական, կոնվենցիոնալ իրավունքը վճռաբեկության կարգով իրացնելու՝ ներպետական օրենսդրությամբ երաշխավորված հնարավորությունը իրավական պաշտպանության այդ միջոցը սպառելու նպատակով: Վճռաբեկ բողոքարկումը վերջին հաշվով որոշակի դատավարական նպատակի՝ դատական ակտերի վճռաբեկ վերանայման հասնելու միջոց է: Որպես դատական ակտերի վճռաբեկ վերանայման նախադրյալ կամ առիթ՝ վճռաբեկ բողոքարկման իրավունքը պետք է իրացվի օրենքով դրան ներկայացվող որոշակի պահանջների պահպանմամբ: Ըստ այդմ այդ պահանջները հանդես են գալիս որպես դատական ակտի վճռաբեկ վերանայման իրավունքի սահմանափակումներ: Արդարադատության մատչելիության իրավունքի երաշխավորման համատեքստում բողոքարկման (վերանայման) իրավունքի որոշակիորեն սահմանափակումն իրավաչափ է համարում նաև Եվրոպական դատարանը՝ ճանաչելով պետության կողմից այս հարցում համապատասխան հայեցողություն դրսևորելու հնարավորությունը: Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ դատական վերանայման բողոք ներկայացնելու համար ժամկետներ և այլ ձևական պահանջներ սահմանող կանոններ նախատեսելը նպատակ ունի ապահովել արդարադատության պատշաճ իրականացումը և իրավական որոշակիության սկզբունքի երաշխավորումը: Այդուհանդերձ այդ կանոնները չպետք է անձին գրկեն իր իրավունքների պաշտպանության հասանելի միջոցից<sup>1</sup>, դրանք չպետք է այն ձևով կամ այն աստիճան սահմանափակեն կամ նվազեցնեն մատչելիության իրավունքը, որ արժեզրկեն այս իրավունքի բուն էությունը: Ավելին, այդ սահմանափակումը համահունչ չի լինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին, եթե այն չի հետապնդում «իրավաչափ նպատակ» և չկա «ողջամիտ հավասարակշռություն հետապնդվող նպատակի և ձեռնարկված միջոցների միջև»<sup>2</sup>: Դեռևս 1995 թվականի հունվարի 10-ի «Քաղաքացիական և առևտրային գործերով ապելացիոն համակարգերի և ընթացակարգերի ներդրման և դրանց գործունեության կատարելագործման մասին» թիվ R (95) հանձնարարականում Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն, հաշվի առնելով բողոքների քանակական աճը և գործերի ողջամիտ ժամկետում քննության անհրաժեշտությունը, իրավաչափ էր համարել բողոքարկման իրավունքի որոշակիորեն սահմանափակումը, մասնավորապես՝ բողոքարկման ժամկետների սահմանումը (3-րդ հոդված b կետ), բողոքարկման թույլտվական կարգի ներմուծումը (3-րդ հոդված, c կետ, 7-րդ հոդված f կետ), միջանկյալ դատական ակտերի բողոքարկման հետաձգումը մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելը (3-րդ հոդված d կետ), բողոքարկման թույլատվական կարգ սահմանված լինելու դեպքում բողոքարկման սահմանափակումը բացառապես իրավունքի հարցերով (5-րդ հոդված c կետ,) դատարանում որակյալ իրավաբանական ներկայացուցչության խթանումը (6-րդ հոդվածի k կետ):

Ինչ վերաբերում է «բողոքարկման իրավունք» և «բողոքարկման ազատութ-

<sup>1</sup>Տե՛ս *Canete de Goni v. Spain*, գանգատ թիվ 55782/00, 2002 թվականի հոկտեմբերի 15-ի վճիռ, կետ 36, *Miragal Escolano and others v. Spain*, գանգատներ թիվ 38366/97, 38688/97, 40777/98..., 2000 թվականի հունվարի 25-ի վճիռ, *Zvolky and Zvolkska v. The Czech Republic*, գանգատ թիվ 46129/99, 2002 թվականի նոյեմբերի 12-ի վճիռ, կետ 51:

<sup>2</sup>Տե՛ս *Ashingdane v. the United Kingdom*, 1985 մայիսի 28-ի վճիռ, գանգատ թիվ 8225/78, կետ 57, *Markovic and Others v. Italy*, 2006 թվականի դեկտեմբերի 14-ի Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 1398/03, կետ 99):

յուն» հասկացությունների հարաբերակցությունը, ապա դրանց սահմանազատման համար հիմք կարող են ծառայել առհասարակ «իրավունք» (սուբյեկտիվ իմաստով) և «ազատություն» հասկացությունների հարաբերակցության վերաբերյալ առկա տեսական մոտեցումները<sup>1</sup>, որոնք տեղայնացնելով քննարկվող խնդրի վրա՝ կարող ենք փաստել, որ վճռաբեկ բողոքարկման ազատությունն օրենքով անձին վերապահված՝ բողոք բերելու իրավունքի իրացման, դրա տնօրինման ազատությունն է: Այլ կերպ՝ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտն ազատ է բողոք բերելու իրավունքի իրացման՝ օրենքի պահանջների շրջանակներում տնօրինելու այս իրավունքը և թույլատրելիի շրջանակներում ընտրելու դրա իրացման իր համար նախընտրելի տարբերակը:

Անդրադարձնալով վճռաբեկ բողոքարկման և վճռաբեկ բողոքի իրավական նշանակությանը՝ պետք է նշել, որ վճռաբեկ բողոքարկումը՝ բողոք բերելու սուբյեկտիվ իրավունքի իմաստով, անձի դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ մասն է, անձի՝ իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոց<sup>2</sup>: Հաշվի առնելով օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու գործառույթի առկայությունը՝ այն նաև միասնական դատական պրակտիկայի ձևավորման գործընթացին անուղղակի մասնակցության միջոց է: Իսկ ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի իրավական նշանակությանը, ապա արդի օրենսդրական կարգավորման պայմաններում, երբ վճռաբեկ վերանայումը սահմանափակված է բողոքի հիմքերով և հիմնավորումներով, այն հանգում է վերանայման սահմանները կանխորոշելուն:

Այսպիսով, վճռաբեկ բողոքը վճռաբեկ վարույթի հիմք ծառայող, օրենքով սահմանված ձևական և բովանդակային որոշակի պահանջների համապատասխանող գրավոր դատավարական փաստաթուղթ է, որը հավաստում է բողոքարկման իրավունքի իրացման պահանջների առկայությունը, իսկ վճռաբեկ բողոքարկումը՝ դատավարության մասնակիցների կողմից բողոք բերելու դատավարական գործողություն, որը վճռաբեկ վարույթի ծագման նախադրյալ է այնքանով, որքանով առաջացնում է այն նախնական քննության առնելու Վճռաբեկ դատարանի պարտականությունը: Վճռաբեկ բողոքարկումը կարող է ծառայել որպես դատական ակտերի վճռաբեկ վերանայման նախադրյալ, եթե պահպանված են վճռաբեկ բողոքարկման իրավունքի իրացման առարկայական, ժամկետային, սուբյեկտային, բովանդակային պայմանները:

<sup>1</sup> St' u *Строгович М.С.*, Проблемы теории права. Избранные труды, в 3 томах/отв. ред. С.Н. Братусь. М.: Наука, 1990. Т.1, էջ 224, *Краснослободцева Н.К.*, Соотношение Понятий «СВОБОДА» И «ПРАВА» Человека, Ленинградский юридический журнал, N4(38), 2014, էջ 79: <http://cyberleninka.ru/article/n/sootnoshenie-ponyatiy-svoboda-i-prava-cheloveka>, *Бадальянц Ю. С., Д. А. Ягофаров.*, Права человека: учебное пособие/ Ю.С. Бадальянц, Д.А. Ягофаров. Москва-Рязань: Издательство «Поверенный», 2006: <http://pravo.news/kniga-grossii-pravo-grajdanskoe/prava-cheloveka-uchebnoe-posobie-yus.html>

<sup>2</sup> St' u *Сухова О.А.*, Աշխատությունը, էջ 63, Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации / Под ред. И.Л.Петрухина. М., 2002, էջ 214.

## КАССАЦИОННАЯ ЖАЛОБА КАК ОСНОВА КАССАЦИОННОГО ПРОЦЕССА

**Татевик Суджян**

*Ассистент Кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ, кандидат юридических наук*

В статье на основе анализа теоретических подходов, нашедших место в юридической литературе, делается попытка дать определение понятий "кассационная жалоба" и "кассационное обжалование", выявить их процессуальное значение соответственно в качестве основы и предпосылки кассационного процесса. Автор также рассматривает вопрос соотношения понятий "право на кассационное обжалование" и "свобода кассационного обжалования". Затем автор анализирует требования, предъявляемые законом к форме и содержанию кассационной жалобы, делая вывод о том, что их роль сводится к констатированию факта соблюдения ограничений права кассационного обжалования.

## CASSATION APPEAL AS A BASIS FOR CASSATION PROCESS

**Tatevik Sujyan**

*Assistant Professor at the YSU Chair of Criminal procedure and Criminalistics, Candidate of Legal Sciences*

The author makes an attempt to give the definitions of "cassation protest" and "cassation appeal" based on the theoretical approaches nominated in the legal literature, to reveal their procedural role respectively as the basis and precondition for appeal process. The author also considers the question of correlation of concepts of "the right to appeal" and "freedom of cassation appeal." Then, the author analyzes the requirements regarding the form and content of cassation appeal imposed by the law concluding that their role is reduced to noting the fact of preserving the restrictions on the right to cassation appeal.

**Բանալի բառեր** – վճարել բողոք, վճարել բողոքարկում, բողոքարկման ազատություն, վճարել բողոքարկման իրավունք, վճարել բողոքի ձևին և բովանդակությանը օրենքով ներկայացվող պահանջներ

**Ключевые слова** – кассационная жалоба, кассационное обжалование, свобода кассационного обжалования, право кассационного обжалования, требования, предъявляемые законом к форме и содержанию кассационной жалобы

**Key words** – cassation protest, cassation appeal, freedom of cassation appeal, right to cassation appeal, the requirements regarding the form and content of cassation appeal imposed by the law